

Գերակա լինելու կարծիքից ազատագրվելու աղոթք

Շնորհակալ եմ քեզ, Հա՛յր, որ հրաշափառ ձևով եմ կերտված, քանի որ ինձ կերտողը դու ես: Շնորհակալ եմ, որ ինձ սիրում ես և ինձ քոնն ես համարում: Շնորհակալ եմ, որ հնարավորություն ես տվել հետևելու Հիսուս Քրիստոսին:

Խնդրո՛ւմ եմ, ների՛ր, որ ցանկություն եմ ունեցել ուրիշների հանդեպ գերակա լինել: Ես այժմ հրաժարվում եմ բոլոր նման ցանկություններից: Ես այլևս չեմ կարող ինձ հանգիստ զգալ ուրիշներից առավել լինելու մտքով: Ես ընդունում եմ, որ բոլորի պես մեղավոր եմ և ոչ մի բանի չեմ կարող հասնել առանց քեզ:

Ջղջում եմ նաև իմ այն զգացումի համար, թե իբր պատկանել եմ ավելի բարձր խավի մարդկանց: Ես դավանում եմ, որ քո առջև բոլոր մարդիկ հավասար են:

Ես զղջում եմ, որ քամահրական ու արհամարհական խոսքեր եմ ասել ուրիշներին, որ նրանց վերնից եմ նայել: Այս խոսքերի ու վերաբերմունքի համար քո ներողությունն եմ խնդրում:

Ես հրաժարվում եմ մարդկանց ցածր համարել իրենց ռասայի, սեռի, ունեցվածքի կամ կրթության պատճառով:

Ես ընդունում եմ, որ միայն Աստծո շնորհիվ է, որ կարող եմ կանգնել քո ներկայության մեջ: Ես հեռացնում եմ ինձ բոլոր մարդկային կարծիքներից ու միայն քեզ նայում, որ փրկես ինձ:

Ես հատկապես հրաժարվում եմ իսլամի այն ուսմունքից, թե արդարներն ավելի բարձր են, թե իսլամը մարդկանց հաջողություն է բերում, թե մուսուլմաններն առավելություն ունեն ոչ մուսուլմանների հանդեպ:

Ես մերժում եմ այն պնդումը, թե տղամարդիկ գերակա են կանանց հանդեպ:

Երկնայի՛ն Հայր, ես հետ եմ դառնում գերակա լինելու բոլոր կեղծ զգացումներից ու փոխարենը որոշում եմ քեզ ծառայել:

Տե՛ր, ես նաև որոշում եմ ուրիշների հաջողությամբ ուրախանալ և ինձնից թոթափում եմ ուրիշների նկատմամբ եղած նախանձը:

Տե՛ր, խնդրում եմ ինձ ճիշտ ու ողջամիտ պատկերացում տուր, թե ով եմ ես քո մեջ: Սովորեցրո՛ւ ինձ այն ճշմարտությունը, թե ինչպես ես դու ինձ տեսնում: Օգնի՛ր ինձ բավարարվելու լինելով այն անձը, որին դու ես կերտել: